ՍՓՅՈՒՌՔՈՒՄ

ԱՄԵՐԻԿԱՀԱՅ ԿՅԱՆՔ

Վերջին հինգամյակին ամերիկահայության մեջ տեսադարձին թափով առաջ կտարվի եկեղեցաշինության գործը: Այսօր ամերիկահայ բոլոր եկեղեցական ծուխերն ալ ունին իրենց եկեղեցիները, որոնք կը լրացնեն հոգևոր, բարոյական և նյութական խարգաված շրջան մը, շնորհիվ հայ հաճախատացյալներու լայն զոհաբերության: Բոլոր եկեղեցիներն ալ ունին իրենց հոգևոր հովիվները, ծխական խորհուրդները, կիրակնօրյա դպրոցները, երիտասարդ կանանց կազմակերպությունները, երեց տիկնանց կազմակերպությունները, Հայ Եկեղեցվո երիտասարդաց կազմակերպությունները, ամուսնացյալ զույգերու կազմակերպությունները, հայ լեզվի գիշերային դպրոցներ, որոնք բոլորն ալ միասին կաշխատին պայծառ և կանգուն պահել եկեղեցիները և վաղ՝ հայ ապագային ոգին:

Ամերիկայի հայությունը ունի առաջնորդական երկու Աթոռներ, մին հաստատված Լոս-Անջելոսի մեջ, իբրև կեդրոն Կալիֆոռնիո թեմին, իսկ մյուսը՝ Նյու-Յորքի մեջ, իբրև կեդրոն Ամերիկայի արևելյան թեմին: Երկու թեմերու մեջ կան մոտ 60 եկեղեցիներ և ծխական հաճախներ և հաճախատացյալներու բազմություն մը, որոնց թիվը կանցնի 120 000-ը, իսկ Ամերիկայի հայ գաղութը իր մեջ կհաշվե շուրջ 200 000 հայություն մը: Անոնք բոլորն ալ ջերմորեն կապված են Մայր Աթոռ Ս. Էջմիածնին և անոր հայրենանվեր Գահակալին՝ Վեհափառ Տ. Տ. Վազգեն Ա. Ամենայն Հայոց Սրբազնագույն Կաթողիկոսին: Իրենց համար Ս. Էջմիածինը և Ամենայն Հայոց Կաթողիկոսը սրբություններ են, որոնց հանդեպ ունին սեր և պաշտամունք:

Ամերիկայի հայությունը ամբողջն կապված է իր Հայաստանյաց մայրենի Ս. Եկեղեցիին այն վստահությամբ, թե Եկեղեցին իրեն համար հոգևոր և բարոյական արժեքներու իրագործման գերագույն ներշնչարանն է, ինչպես նաև իր ազգային կենսունակության ամուր գրավականը: Ահա թե ինչո՞ւ Ամերիկայի հայերը այնքան ուժեղ թափով հառաջ կտանին եկեղեցաշինության գործը:

Այս տեսակետեն նշանակալից նվաճում մըն է Դիտրոյտի Ս. Հովհաննես եկեղեցվո շինության պարագան, որ պիտի ըլլա Դիտրոյտի 20 000 հայության հոգևոր-բարոյական և ազգային կեդրոնը:

Մոտ 1000 հոգի պարփակող այս եկեղեցին պիտի կառուցվի հայկական ճարտարապետական ոճով: Տաճարին կմոտենաս պիտի կայնե Սանահինի և Հաղբատի ոճով ջլակամարներու աստղանման դրություն մը, որ իր կեդրոնին վրա կբռնե Մարմաշենի նմանողությամբ կաթողիկե հայկական գմբեթը: Եկեղեցին շրջապատող որմը պիտի ըլլա ութանկյուն բոլորանման մը, որուն յուրաքանչյուր երեսը պիտի ունենա եռանկյունաձև վերջավորություն: Կառույցին նյութեղենը պիտի ըլլա մոխրագույն սրբատաշ քարը, իսկ գմբեթը ոսկեգույն:

Տաճարի շինության ճարտարապետն է Դիտրոյտեն պ. Սուրեն Փիլաֆյան, իսկ Փարիզեն ճարտարապետ պ. Եդվարդ Ոլթունյան իր մասնակցությունը կբերե որպես խորհրդատու:

Ընդհանուր ծախքերու նախատեսումն է 1 000 000 դոլար, որուն 900 000-ը արդեն իսկ պատրաստ է, գոյացած ժողովրդական հանգանակությամբ:

Եկեղեցվո շինության հանձնախումբին նախագահն է պ. Ակեքս Մանուկյան, իսկ ատենապետն է պ. Եդվարդ Մարտիկյան: Այս երկու պատվական ազգայինները եղած են Դիտրոյտի հայության բարեգործները, գաղութի հոգևոր և ազգային կազմակերպության համար տրամադրելով իրենց ժամանակը, տաղանդը, ինչպես նաև կատարելով

Դիտրոյտի Հայոց Ս. Հովհաննես եկեղեցին

մեծագումար նվիրատվություններ: Արդար պիտի ըլլար ըսել, թե անոնք մղիչ ուժն են գաղութին և այն հարակից հայ մշակութային տան, որ իր կարգին պատկառելի շինություն մըն է, բաղկացած 1000 հոգի ընդգրկող կեդրոնական սրահե մը, որ շրջապատված է ավելի փոքր սրահներով և սենյակներով, որոնք կծառայեն գաղութին որպես կիրակնօրյա հոգևոր դպրոց, հայ լեզվի վարժարան և կրոնական ու մշակութային ձեռնարկներու հավաքավայր:

Այսօր պ. Ալեքս Մանուկյան, Սփյուռքի մեր ապագային ու հոգևոր ասպարեզին մեջ, կբերե ծառայության շատ մեծ և լայն բաժին մը, որպես շատ սիրված նախագահը Հայկական բարեգործական ընդհանուր միության, որպես բարերարը շատ մը հայկական դպրոցներու, ուսանողներու, եկեղեցիներու և կազմակերպություններու: Այս տարի ան հանձն առավ նաև կառուցումը նոր դպրանոցի մը Երուսաղեմի վանքին մեջ: Այս դպրանոցին նպատակը պիտի ըլլա պատրաստել հայ եկեղեցականներ, քահանաներ, ուսուցիչներ և ապագային մշակներ:

Պ. Ալեքս Մանուկյան շատ համակրելի և պատվական անձնավորություն մըն է, խորապես հայրենասեր և եկեղեցասեր, խոհուն, բանիմաց, շրջահայաց և իմաստուն: Իր շնորհալի անձնավորությամբ ան հանդիսացավ այն մագնիսը, որուն շուրջ խմբված, Դիտրոյտի հայությունը կերտեց ու պիտի կերտե իր մշակույթի տունն ու եկեղեցին: Եվ ավելին. հակառակ կարգ մը կարտուղի մտածողներու, ան իր խոհեմությամբ հաջողեցավ խանդավառել իր շուրջինները այն գեղեցիկ առաջադրությամբ, որ Դիտրոյտի եկեղեցին ըլլա մեր հայեցի ոճին հարապատ և աչքառու արտահայտությունը Ամերիկյան աշխարհամասին մեջ և փառավոր վկայությունը հայ մեծարժեք գեղարվեստին:

Պ. Ալեքս Մանուկյանի ընկերակիցը՝ պ. Եդվարդ Մարտիկյան ևս, իր կարգին տիպար մըն է, օժտված շատ մը առաքինություններով: Երիտասարդ մըն է ան, վարվառուն, համակրելի, բանիմաց և ազնիվ, լեցուն հայեցի ուշիմությամբ, որ եղած է իր կյանքի հաջողության լավագույն տվյալը: Լայն արժանիքներու տեր այս պատվական հայորդին տոգորված է սիրով իր ապագին, Եկեղեցիին և Ս. Էջմիածնին: Սրբություններ են ասոնք իրեն համար, այնքան նվիրական ու սիրելի, որ երբևիցե չէ վարանած բերել իր լայնագույն գոհաբերությունը հանուն այդ սրբություններուն: Իր կարգին պ. Եդվարդ Մարտիկյան, մեծագումար նվիրատվությամբ մը, հանձն առած է Ս. Երուսաղեմի վանքին մեջ կառուցանել հայկական թանգարան մը, որ պիտի ըլլա Սփյուռքի հայության մեծագույն թանգարանը:

Կ. Վ. Դ.